# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

## ԵԵԿԿ-ԵՄԱՊՁԲ-26/11 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

8 հուլիսի 2026թ.

2026 թվականի հուլիսի 8-ին ժամը 11:00-ին ՀՀ, ք. Երևան, Քըրք Քըրքորյան 16 հասցեում գտնվող «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի շենքում տեղի ունեցավ մշտադիտարկման ենթակառուցվածքի ձեռքբերման ԵԵԿԿ-ԵՄԱՊՁԲ-26/11 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Դ. Ավանեսյանը՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի փոխտնօրենը, |
| Տ. Արզումանյանը՝ | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առանձին գործառույթների իրականացման խորհրդատուն, |
| Ա. Ղուկասյանը՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի ՏՏ ենթակառուցվածքի սպասարկման բաժնի պետը, |
| Ձ. Թովմասյանը՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի հաշվապահը, |
| Ա. Դավթյանը՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի վարչատնտեսական բաժնի պետը: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Ավանեսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղարը՝ «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակում նախկինում կասեցված բանակցությունների վերսկսման վերաբերյալ:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԿԱՍԵՑՎԱԾ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի հուլիսի 8-ին՝ ժամը 11:00-ին, Հանձնաժողովը վերսկսեց նախկինում կասեցված բանակցությունները և շարունակեց դրանց անցկացումը, որին մասնակցում էին նախաորակավորված և բանակցություններին հրավիրված հետևյալ մասնակիցների ներկայացուցիչները.

- «Իմպեքս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ. Շախնազարյանը,
- «ԱյԱյ Սեք» ՍՊԸ և «Ջի-Էս-Սի» ՍՊԸ կոնսորցիումի կողմից՝ «ԱյԱյ Սեք» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Ավագյանը և «Ջի-Էս-Սի» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Ավետիսյանը, ինչպես նաև «ԱյԱյ Սեք» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ՝ Մ. Մարուքյանը,
- «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչներ՝ Ա. Նիկողոսյանը, Ս. Մինասյանը և Լ. Ազատյանը:

«Էյչ Գրուպ» ՍՊԸ և «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ կոնսորցիումի ներկայացուցիչները բանակցություններին չեն ներկայացել:

Բանակցությունների ընթացքում ներկա մասնակիցները հերթականությամբ ներկայացրեցին իրենց կողմից առաջարկվող լուծումները և առաջարկները: Դրանց քննարկման շրջանակում Հանձնաժողովի և մասնակիցների միջև տեղի ունեցան հարցուպատասխան և մասնագիտական քննարկումներ:

Քննարկման արդյունքներով Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն բանակցությունների ընթացքում ներկայացված տեղեկատվությունը և տեղի ունեցած քննարկման արդյունքները:
2. Սահմանել, որ նախաորակավորված բոլոր մասնակիցները մինչև 2026 թվականի հուլիսի 13-ը՝ ժամը 15:00-ն ներառյալ, իրենց վերջնական առաջարկներն ու առաջարկվող լուծումները Word ձևաչափով ներկայացնեն գնահատող հանձնաժողովին՝ դրանք ուղարկելով Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանի v.eloyan@promotion.am էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Հանձնարարել Հանձնաժողովի քարտուղարին սույն որոշման մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել նախաորակավորված բոլոր մասնակիցներին և առաջարկել սահմանված ժամկետում ներկայացնել իրենց վերջնական առաջարկներն ու առաջարկվող լուծումները:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Հնձնաժողովի հաջորդ նիստը նշանակել 2026 թվականի հուլիսի 13-ին՝ ժամը 15:00-ին, «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի վարչական շենքում:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Դ. Ավանեսյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Տ. Արզումանյան ______________

Ա. Ղուկասյան ______________

Ջ. Թովմասյան ______________

Ա. Դավթյան ______________

*Նախարարակավորված և բանակցություններին հրավիրված մասնակիցների ներկայացուցիչներ՝*

Մ. Շախնազարյան ______________

Ա. Ավագյան ______________

Հ. Ավետիսյան ______________

Մ. Մարուքյան ______________

Ա. Նիկողոսյան ______________

Ս. Մինասյան ______________

Լ. Ազատյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ______________